

կուլտուրայի զարգացմանը, այլև որոշ դեր է խաղացել նաև վրաց ու այլ փոզովորդների տպագրական գործի ասպարեզում¹:

Եվ ահա Հերակլ Բ. Թագավորը, որ վաղուց էր լսել Պոդոս Հովհաննիսյանի մասին, 1781 թ. Կ. Պոլիս է ուղարկում իր լիազոր Մելիտոնին՝ Պոդոսին Թբիլիսի հրավիրելու: Նույն թվականին Մատենի Մելիտոնը հասնելով Կ. Պոլիս, բանակցում է վարպետ Պոդոսի հետ, և նրանք համաձայնելով պայմանագիր են կնքում: Հենց այդ պայմանագիրն է, որ պահպանվել է Հայկական ՍՍՌ Մատենագարանի արխիվում: Այն բաղկացած է երկու օրինակից. մեկը հայերեն, իսկ մյուսը՝ հայատառ թյուրքերեն: Հայերեն պայմանագիրն ստորագրել է Պոդոս դպիր Հովհաննիսյանը և վավերացրել հայերեն, ռուսերեն, թյուրքերեն ու հունարեն լեզուներով իր անունը կրող մի կնիքով: Պայմանագիրն ստորագրել են նաև երկու վկաներ՝ հունարեն ստորագրություններով: Հայատառ թյուրքերեն պայմանագիրը հաստատված է Հերակլ Թագավորի՝ հինգլեզվյա (վրացերեն, հայերեն, լատիներեն, հունարեն և թյուրքերեն) կնիքով: Այս պայմանագրի վերջում ևս գրված են վկաների ստորագրություններ (հայերեն, հունարեն):

Պայմանագրի բովանդակությունը հետևյալն է. տպագրության վարպետ Պոդոսը պարտավորվում է մեկ սպասավորով մեկնել Թբիլիսի՝ վրացական հին տպարանը վերակառուցելու, վրացական նոր ձևի տառեր ձուլելու, գրառար և տպագրիչ վարպետներ պատրաստելու և տպագրական այլ աշխատանքներ կատարելու: Հրավիրող կողմը պարտավորվում է այդ աշխատանքների գիմաց վարպետ Պոդոսին Հերակլի գանձարանից վճարել տարեկան երեք հազար հինգ հարյուր զուռուշ, իսկ նրա սպասավորին՝ հարյուր հիսուն զուռուշ: Ըստ որում, նրանք իրավունք են ունեցել նախապես ստանալու մեկ տարվա լրիվ աշխատավարձ: Ինչ վերաբերում է Կ. Պոլսից Թբիլիսի և Թբիլիսից Կ. Պոլիս գնալ-գալու բոլոր ծախսերին, ապա գրանք ևս, ըստ պայմանագրի, հոգացվել են Թագավորական գանձարանի հաշվին:

Վարպետ Պոդոսը և իր սպասավորը 1781 թ. գալիս են Թբիլիսի և մեծ եռանդով անցնում տպարանի վերակառուցման աշխատանքին: Նրանք փոխում են տպարանի հնացած գործիքները, ձուլում են վրացերեն տառերի նոր ձևեր և տեղացի մի քանի աշակերտների օգնությամբ վերսկսում տպագրության աշխատանքը:

1782 թ. Պոդոսի և նրա աշակերտների եռանդուն աշխատանքի շնորհիվ, լույս է տեսնում 30 էջից բաղկացած մի բրտյուր՝ «Գովք նոր տպարանի» խորագրով:

Մեկ տարի, հետո, 1783 թ., նույն տպարանում վարպետ Պոդոսը, Հերակլ Բ-ի կարգադրությամբ, տպագրում է 320 էջից բաղկացած հաջորդ գիրքը՝ «Կոնդակի» (Մաշտոց) վերնագրով:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ գրքի սկզբում և վերջում հիշատակվում է վարպետ Պոդոսը որպես հերակլյան տպարանի վերակառուցող²:

¹ Գ. Առնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1946 թ., էջ 141, 178—183:

² Հիշյալ գրքերը վրացերեն լեզվով տպագրված 57 և 58-րդ գրքերն են: Նշված գրքերից մեկական օրինակ պահվում են Լենինգրադի Սալտիկով-Շչեգրինի անվան զբոսաբանում: Սույն ավյալները քաղել ենք 1941 թ. Թբիլիսիում հրատարակված «Վրաց գիրքը» (վրացերեն լեզվով) աշխատությունից: